

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2018 թ. դպրոցական օլիմպիադայի
մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը – 150 րոպե)

10 - րդ դասարան

1. Դուրս գրել այն գետերը, որոնց ջրերը ելք չունեն համաշխարհային օվկիանոս..... 1 միավոր
Սուրեյ, Ամուդարյա, Կոլորադո, Շատ Էլ Արաբ, Կուր, Դանուբ, Պեչորա,
Շարի, Մագդալենա, Հորդանան, Պարանա, Իրավադի
2. Դուրս գրել այն պետությունները, որոնք միաժամանակ ելք ունեն երկու
օվկիանոսներ, կամ նրանց պատկանող ծովեր..... 1 միավոր
Իսպանիա, Եգիպտոս, Կոլումբիա, Իրան, Մավադոր, Հարավ Աֆրիկյան
Հանրապետություն, Մեծ Բրիտանիա, Կոստա Ռիկա, Սոմալի, Թուրքիա,
Ճապոնիա, Էկվադոր
3. Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 1,5 %: Տարվա
ընթացքում ներգաղթը կազմել է 15 000 մարդ, իսկ արտագաղթը՝ 6000: Որոշել.
ա / բնակչության բնական աճը,
բ / բնակչության թիվը 1 տարի հետո 2 միավոր
4. Խաղաղ օվկիանոսում գտնվող նավի կորդինատներն են՝ հս. լ. 42° 30՛
և արլ. ե. 160°: Որոշել նավի հեռավորությունը կիլոմետրերով.
ա / հարավային արևադարձից,
բ / հյուսիսային բևեռային շրջագծից 2 միավոր
5. ա / Ո՞րոնք են տրանսպորտի աշխատանքի երկու գլխավոր ցուցանիշները:
բ / Ի՞նչ էք հասկանում «տրանսպորտային հանգույց» ասելով: Բերեք 1 օրինակ:..... 2 միավոր
6. Միջերկրական ծովի ավազանում տարվա n ՝ ր սեզոնն է խոնավ և ինչու՞ :..... 1 միավոր
7. Օդի բացարձակ խոնավությունը 20 գ/մ³ է, իսկ հարաբերական
խոնավությունը՝ 80%: Որոշել օդը հագեցնելու համար անհրաժեշտ
խոնավության քանակը:..... 1 միավոր
8. Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը (հեկտար), եթե ցորենի
համախառն բերքը 24 000 տոննա է, իսկ միջին բերքատվությունը՝ 40 գ/հա..... 1 միավոր
9. Երկրակեղևի ապարների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ,
որո՞նք՝ սխալ..... 1,5 միավոր
 1. Ըստ ծագման ապարները բաժանվում են երկու խմբի՝ հրային և նստվածքային:
 2. Երկրի ընդերքից դուրս եկած հրահեղուկ զանգվածից առաջացած ապարները կոչվում են մագմային:
 3. Գրանիտը երկրի խորքում առաջացած ապար է:
 4. Մարմարը, կվարցը և գնեյսը նստվածքային ծագման ապարներ են:
 5. Օրգանական ծագման նստվածքային ապարները գոյանում են օդի ջերմաստիճանի, քամու, ջրի և օրգանիզմների ազդեցությամբ:
 6. Խարամը, պեմզան և օբսիդիանը հրային ծագման ապարներ են:

10. ՀՀ տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ..... 1,5 միավոր
1. Խողովակաշարային տրանսպորտն ամենաարագն է զարգանում:
 2. Արտաքին բեռնափոխադրումներում առաջատարը օդային տրանսպորտն է:
 3. Բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է փոխադրումների հեռավորության աճով:
 4. Երկաթուղային գլխավոր մայրուղին հանրապետության տարածքի նկատմամբ ունի եզրային դիրք:
 5. Բարդ ռելիեֆի պայմաններում հանրապետությունում երկաթուղիների կառուցումն ավտոճանապարհների կառուցման համեմատությամբ ավելի էժան է:
 6. Երևանը, Գյումրին և Հրազդանը երկաթուղային հանգույցներ են:
11. Գրել այն լեռների համարները, որոնք առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ..... 1 միավոր
- | | |
|------------------------|---------------------|
| 1. Էլբուրսի լեռներ | 5. Կապի լեռներ |
| 2. Վերխոյանսկու լեռներ | 6. Մեծ Կովկաս |
| 3. Անտարկտիկական Անդեր | 7. Պիրենեյներ |
| 4. Ապալաչյան լեռներ | 8. Դրակոնյան լեռներ |
12. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են պողպատի արտադրությամբ.....1 միավոր
- | | |
|--------------|--------------|
| 1. Մեքսիկա | 5. ԱՄՆ |
| 2. Չինաստան | 6. Եգիպտոս |
| 3. Արգենտինա | 7. Ռուսաստան |
| 4. Ճապոնիա | 8. Լեհաստան |
13. Մեծ Բրիտանիայի տրված քաղաքները դասավորել հյուսիսից հարավ ճիշտ հերթականությամբ..... 1 միավոր
- | | |
|-------------|---------------|
| 1. Լոնդոն | 2. Բիրմինգհեմ |
| 3. Մանչեսթր | 4. Գլազգո |
14. Գրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային լեռնագագաթների համարները.....1 միավոր
- | | |
|------------|-------------|
| 1. Քաչքար | 5. Սիփան |
| 2. Ծղուկ | 6. Սուկավետ |
| 3. Թեժլեռ | 7. Աչքասար |
| 4. Աժդահակ | 8. Գոմշասար |
15. Բնության հատուկ պահպանվող տարածքներից ամենաբարձր կարգավիճակ ունի.....1 միավոր
- | | | | |
|--------------|-----------------|-------------------|------------------------|
| 1. արգելոցը, | 2. արգելավայրը, | 3. ազգային պարկը, | 4. բնության հուշարձանը |
|--------------|-----------------|-------------------|------------------------|
16. Ո՞րն է բնութագրում կայուն զարգացման հայեցակարգի էությունը.....1 միավոր
1. Բնությունից առավելագույնս ռեսուրսներ վերցնելով ապահովել տնտեսության արագ աճ:
 2. Շրջակա միջավայրի նվազագույն կորուստներով հասնել առավելագույն արդյունքների:
 3. Զարգացնել տնտեսությունը՝ տնտեսական և սոցիալական առաջնայնությունների գերակայությամբ:
 4. Տնտեսական զարգացման հիմքում դնել միայն էկոլոգիական առաջնայնությունները: